

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշխրիոյ համար	12 ֆր.
արեկա՛ի	7 "
վեցուսայ	7 "
Արսասահմանի	
համար արեկան	15 ֆր.
վեցուսայ	8 "
Ամերիկայի համար	
սար կան	3 սյ.
վեցուսայ	1.50 "

Ծանուցումն տղր ա-
սացին երեսին համար
40 սանթիմ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիմ է. երեսին ա ելի
անգամներու համար
20 0/0 գեղը կրնայ:

Հասնայի համար ձեռ
ն 10 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ՐՈՎՈՒԻ ՉՈՐԵՔԵՂԻՄԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРЯЕТЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դուսակ եւ ցրակ
որ կեղ խմբագրութեան
հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjourn"
Varna (Bulgarie)

Պուշխրիոյ համար
ձեռնի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձեռնի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ յնկ
տուր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՎԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՏՕԲ Ե. ՍՕԹԻՐՈՅ

Վերաբայով — Մանկարար

Վանա Մարիա-Լուիզա, փոքր
թիւ 8 (Չինո, որական քրիստոս)
Հիւանդ կրնգունի ժամը 2—4 կէս
օրէ վերջ:

2—5

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷԶ»

Արգէն այս անունով բը
րոշիւրը յանձնված է տպագ-
րութեան:

Իրօշիւրի նպատակն է, առանց
խժքածանքի Դաշնակցութիւնը
մէջ տեղ գնել իր իսկութեամբ
և միեւնոյն ժամանակ փաստել
թէ՛ իմ պայքարը սկսված է շատ
հին ժամանակից և վերջերս
միայն սուր կերպարանք ընդու-
նեց: Ինչպէս է որ բրօշիւրի
մէջ փաստող զօկիւմանները
մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրօշիւրի գինը տպագրութիւ-
նից վերջ 3 ֆրանկ է լինելու,
իսկ բաժանորդ գրովորի համար
2.50 ֆր.:

Դիմել «Շարժում» խմբագրութեան

ՀՍԵ ԴԵՂԱՎԱՃՍՈՒՄՆԵՐ

Ս. Դանարեան եւ Ընկ.

Սոյանոքա փոքր (Պալլաբ բազար)
Թիւ 524 Ա. ու շառքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն գեղազա-
նատանս մէջ կը գտնուին մաքուր եւ
առաջնակարգ գեղերու մեծաքանակ
մթերքէ զատ թարմ հանքային ջու-
րեր, եւրօպական ամէն տեսակ էս-
թէս իսկ իսթէներ, բժշկական
ածառներ, քառուղի սպրանայ
վերաբերեալ բոլոր առարկաներ,
իրիկաթէօրներ, պիպրօններ, ջեր-
մաչափներ եւն հւն:

Ասոնցմէ զատ կը գտնուի նաեւ
ուսանկարչութեան, ոսկերչութեան
եւ առհասարակ արհեստի վերաբեր
եալ քիմիական մաքուր բաղադրու-
թիւններ:

Թարմ եւ անարատ

Նոր վէկիայի ձկան իւղ

Ճարդ գեղերու սղութեանը զժգո-

հութիւն յայտնողները կը բաւէ որ
ուրիշ տեղէ մը գնում ընելէ առաջ
անգամ մը դիմեն նոր գեղազա-
նատանս, ուր ապահովարար պիտի
գտնեն գեղերու ամանութեան հետ
գեղերու ընտրելագոյնը:

Շրջակայ քաղաքներու եւ գիւղե-
րու մէջ գեղերու կրկնավաճառումով
զբաղող խանութպաններու համար
մասնաւոր գեղը:

Յանձնարարութիւնք փութով եւ
ճշգրութեամբ կը գործադրուին:

ԲԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ
ՐՕԲՈՍ Ա. ԸԱՏՆԵՐԸ

— — —

Կուսակցութիւնները անհամ-
բերատար են գէպի իրենց քըն-
նադատները, որովհետեւ նրանք
կուսակցութեան շահերով կուրա-
ցած մոռանում են հայրենիքի
իրական շահերը: Մեր սոսաժը
փաստելու համար բաւական է
օրինակ բերենք իտալական նոր
գրական լեզուն ստեղծող և Կա-
ւաճային կատակերգութիւնը գը-
րող Դանտէն: Նա պատ-
կանում էր գիրքէլիւնների կու-
սակցութեան, հալածական
էր իր հայրենիքում. և վերջա-
պէս փախաւ Փարիզ 1304ին,
ու Փարիզի Սորբոնի ուսուցչա-
պետների հետ վիճարանութեան
միջոցին նախ ինքզինքը այս-
պէս ծանօթացրեց նրանց:

«Դուրանտ Ալիգէտի է իմ ա-
նունը բայց Իտալիայում սոցորա-
կան եղած համառօտագրութեամբ
Դանտէ են կոչում ինձ: Փլորէն-
ցիոյի ազնուական ընտանիքից
եմ սերած և երկինքը, որի
հրամանովը ծնվել եմ—1265,
ինձ գատապարտել է կուսակցու-
թեան գերի լինող ժողովրդե-
րի յուզված կեանքին: Չեր Գաղ-
գիայի մէջ՝ կուսակցութիւնները
իրարու հետ կաւում են՝ բայց
առանց մէկզմէկ ատելու, իսկ
մեզնում իրար թէ ատում են և
թէ սպանում:

«Ընտանիքներում առօքինու-
թիւններից աւելի ատելութիւնն
է խնամքով շարունակվում: Կու-

սակցական ոգին միշտ գէպի ե-
լեան է առաջնորդում, միայն
հայրենասիրութիւնն է մեծ քա-
ղաքացիներ կազմակերպողը. քա-
ղաքակառնութեան մէջ՝ մարդս
հազիւ ազատ է և կարող իր խղճի
թելադրութիւններին անսալու.
այլ միշտ կամ գերի է իր կրօն-
րին կամ խաղաղիկ դիպածնե-
րին: Եւ ահա դրա մէկ օրինակն
էլ ես եմ. Գլէֆիան ծնված.
պարագաները ինձ Գիպէլեան
դարձրին (եկու քաղաքական
գործուն կուսակցութիւններ Իտա-
լիոյ)՝ Երկրիս ծառայելու փափա-
զը ինձ յորդորեց այնպիսի պաշ-
տաման հետեւիլ որ պահանջե-
լու իրաւունք է տալիս իմ հա-
սակն ու եաանդը: Չինոր,
Դեսպան ու Փլորէնցիայի դըլ-
խաւոր պատարներէց մինը լի-
նելուց յետոյ՝ տեսայ որ իմ կու-
սակցութիւնը ապերախտութեամբ
փոխարինեց իմ ծառայութիւն-
ները, որովհետեւ կուսակցու-
թիւնները ապերախտ են հան-
դէպ նրանց, որոնք ամեն բա-
նից առաջ հայրենիքն են սի-
րում: Գիրքէլեանները՝ որոնց
հետ միաբան պատերազմել էի,
մոռացան իմ ծառայութիւնները՝
երբ նրանց յիշեցրի թէ՛ անկա-
րելի է որ Փլորէնցիան մի օտար
տիրով ծառայէ. ուստի նախաք-
սորեցին, ու վերջը ողջ ողջ այ-
րվելու գատապարտվեցի՝ եթէ
երբէք յաղթական կուսակցու-
թեան ձեռքն ընկնէի...

Այսպէս է եղած իմ քաղաքա-
կան կեանքը, որ ինձ մարդկոնց
ճանաչելու ցաւալի օգուտը տը-
ւած է:

Աշխարհի մէջ հին բան չը կայ
ասում են, չը կայ մանաւանդ ժո-
ղովրդների կեանքի մէջ, որոնց
կեանքի գրուագները նմանո-
թիւններ ունեն:

700 տարի առաջ Դանտէն նոյն
պայմանների մէջ է եղել. ինչ
պայմանների մէջ գտնվում են
այսօր այն հայ անհատները ո-
րոնք քննադատում են մեր յճ-
զափոխական կուսակցութիւննե-
րին և ցոյց տալիս. նրանց պա-

Կասաւոր կողմերը:

Դանտէն ասում էր. — Փլորէն-
ցիան օտարին չը պէտք է ծա-
ռայէ. և նրա կուսակցութիւնը
Իտալիայի ամենամեծ մարդկան.
ցիցայդ մէկին ողջ ողջ այրելու էր
գատապարտում: Հայ քննադատ-
ները ասում են որ մեր կուսակ-
ցութիւնները, մանաւանդ Դաշ-
նակցութիւնը իր նպատակին չէ
ծառայում, այլ դարձել է սի-
րողների, ձրիակերների պատա-
պարան և յիմար աննպատակ
քալիւրով ժողովրդին գէպի վերջ
նական կորուստ է տանում: Դաշ-
նակցութիւնը ամեն ճվգ թափում
է այդպիսիներին սպանել կամ
բարոյապէս կամ նիւթապէս,
կամ ֆիզիքապէս...

700 տարի առաջ անմահ և Ի.
տալիայի պարծանքը կազմող
Դանտէն ողջ ողջ այրումի էր
գատապարտվում Իտալիոյ տա-
կանքը կազմող ամբոխի կողմից,
այսօր Դաշնակցութիւնը նոյնա-
նման տակաւք ներկայացնող հայ
տարրի միջոցով ուղում է չեզո-
քացնել, ջնջել հայրենիքի ի-
րական շահերը պաշտպանողնե-
րին:

Ինչ արաւ Դանտէն այդ պա-
րագաներում. հեռացու քաղա-
քական գործունէութիւնից, Ա-
հա ինչ է ասում նա:

«Մերժված բարեկամներիցս
հարկադրվեցի թշնամիներին
ապաւինիլ: Իայց վերջը հրա-
ժարվեցի այդ փառասիրութիւ-
նից որ իմ բոլոր աղէանների
պատճառն էր եղած, և նրանից
յետոյ սոսի աքսորեալ եմ: Այս է
եղած իմ քաղաքական կեանքս,
որ ինձ ցաւալի օգուտ է տւել,
այն է մարդկանց ճանաչելու:

Եւ իրօք, որչափ ցաւալի օգուտ՝
մարդկանց ճանաչելը: Որչափ
յուսախաբութիւն երբ զանազան
քաղաքական գործիչ Գասպար-
ների ասկից մի մը շահամոլ խա-
ժակ են դուրս գալիս ու հայրենի
քի շահերը ծառայեցնում իրենց
աճանական շնչին շահերին: Վեր-
ջէք «Երկրիս խմբագրութիւնը,
«Հայրենիք» խմբագրութիւնը,

«Ռեպուբլիկ» խմբագրությունը, բոլորն էլ կազմված են մարդկանցից որոնք զեկապարվում են մի այն իրենք զիրենք և իրարին ներք կշտացնելու խնդրով, հակառակ նրան որ իրենց գրածներին ամեն տողում հայրենիք, ազատագրությունը, վրէժը խօսքերը 100 անգամ է կրկնվում:

Այո, ցուալի օգուտ է մարդկանց ճանաչել, որովհետեւ այդ ճանաչումը ստիպում է քիչ ամենամեծ հայրենասերի դիմակի տակ զգելի ստորակր, կեղծիքը, շառլատանությունը, խտրբարյունությունը և գաճաճը գտնել ու յայտարարել: Այսպես յայտարարություններն է որ այլևս րանում է ազգաների դուռը:

Վեր կ ց Գոստե, և տես, մեզնում զեւ մարդիկ, կուսակցությունները նոյն են, ինչ որ էին 700 տարի առաջ քո հայրենիքում: Այս մեր քննադատների վիճակը աւելի ծանր է, որովհետեւ գոնէ զու ապրում էիր 7 դար առաջ և գիտէիր թէ զործող զբնի՞ն վայրենիների հետ է, իսկ մենք ապրում ենք քաղաքակրթութեան զէնիթի հասած միջոցին և յայտնում հաւատում ենք, բայց ոչ նոյնն են: Այն համար աւելի ծանր է մարդկանց ճանաչելը և աւելի ցաւալի օգուտ այդ ճանաչելուց ստացած ...

ՎԱՐԴՈ

ՍԼԱՑԻԿ ՆՈԹԵՐ

ԿԱՆԱՆՑ ՀԱՅՈՑ ԵՊՈՍՍՄԱՏՈՅԸ
և ի
ԱԶԱՏ ՀԱՅԵՐՈՒ ՕՒՆՈՂ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«ԻՆՉ Է ԱՆԱՎՊԿՇԱՐՈՒՄԸ
Ս Ե Ր Դ Է Ի՞»

«Եստ. Ասի. քիսե և և վերջ»

Թաշնոց օրը ստացունք հետեւեալը՝ որ կարծես՝ գաղափար մը կուտայ թէ որքան իրաւացի է եղած նախագուշակումս:

«Պարտաւոր, երկաւապարտ եմ՝ ձեր ազնիւ ու շուտփոյթ պատասխանել՝ թմ ձեզ ուղարկած գիտումիս համար եւ կը փութամ ներփակել հանգանակութեան թերթիկը: Ինչ որ ի ստ հազուադէպ հայ պարուններէն էք Հօնտոնի ու Մանչեսթրի՝ որ՝ բաւականաչափ բարեկիրթ գտնուեցան պատասխանելու: Կրնամ խնդրել ձեր բարի ազգայնութիւնը ձեր հայրենակիցներուն վրայ եւ խրատը՝ թէ ո՞րն է լաւագոյն միջոցը մեր ծրագիրը յաջողցնելու, որովհետեւ պէտք մեծ է այժմ եւ առաւել մեծ պիտի ըլլայ քանի ձեռքը յառաջանայ: Չեմ գիտեր թէ ի՞նչ նախապաշարում կայ մեր աւս ջանքերուն հանդէպ:

«Հաւատացէք ինձ՝ պորոնայք, իմ խորին շնորհակալութեամբս ձեր ազ

նուութեան համար,
Ձերդ անկեղծօրէն
ՄՍՏՐԻՆ ՔՕԼ»

Խեղճ կինը կը կարծէ թէ հայ հայրենաստները առատօրէն տալով իրենց ազգակից խնդրարկուներուն, մասնաւոր «նախապաշարում» մը ունին օտարականի հանդէպ և անոր համար չեն օժանդակեր: Հետեւաբար, կը խնդրէ մեր ազգայնութիւնն ու ժողովատեքը գործը յաջողութեամբ պահելու Ազատ Անդրիա ապրող հայոց մէջ:

Եթէ փորձուէի անհատական խրատ մը տալ, ուրիշ բան չը պիտի ըլլար բայց եթէ զատել հարիւրի չափ աւելուներ և յաճանելով արիւն Գոյի, առաջարկել որ առնց ուղարկէ մէկ-մէկ ծաղկեփունջ զբազան ամէնէ աւարդիչ ու անուանարկիչ բաներով հիւսուած Ասիէ տարբեր վարձուք բացալձակ անմտութիւն պէտք է համարել:

Ինչ է ուրեմն այդ մարդակերպներուն փաստաբանութիւնը այս կանանց դէմ: Այս ասիկայ յեղափոխականներն կան միջոցին եւ ո՛չ ալ միամիտները յաճու առաջնորդող անօրէններն... Բոլորն ալ անզգիացիներ, ջերմեռայ կանայք, մարդասէր հոգիներ ինչո՞ւ չեն տար ինչ է նախապաշարումներն... Արդեօր այս պարագային ալ անպատուութիւն կը համարեն օտարին ձեռքով իրենց սզգակիցներուն հոգսը մը և ասոր համար չեն տար... Թերեւս:

Այս այս պարագան առաւել ևս զայրացողք կը դառնայ՝ երբ կը յիշեն որ գեռ քանի մը շաքարով եր առաջ կարգ մը քարշափայեր Հօնտոնի 16—20 սկի կը հաւաքուին մէջերնին սիրենց բոլորին սիրելի» Նախկին դեսպան

Թիրքական Հօնտոն նուէր մը բնէլու իր հատարման առթիւ, ի պատիւ և ի երախտագրտութիւն անոր կատարած բարեքներուն Հօնտոնի Հայրենասէր, եւ նոյն իսկ երկու երեքը ատոնցմէ լուսն տի մը—որուն անունը չեմ յիշեր՝ որպէսզի կրկին այ ու ձախ չը վազվազ լալով պաղատելով թէ ինչու իր անունը այսպիսի սեղեր կը յիշուին—գրասենեակը կը խօսակցէին:

—Մեզք որ շուտով պիտի կորսնցրնենք էֆէնտին, կըսէ մէկը:

—Ատոր տարակոյս չկայ, էֆէնտին մեր հայրն էր և բնաւ չէր վարարել Հօնտոնի հայրու շահը պաշտպանելու...:

—Էֆէնտին պէս անհատներ յիշ կը գտնուին բայց չնորհեւ մեր վեհափառ կոյսեր, կրկին զուրկ չենք մնար էֆէնտին նման հոգատար անձնաւորութիւնք մը...:

Այսպիսի խօսակցութիւն Հօնտոնի նման տեղ մը ճիւղի մը համար՝ որ Հայրենիք թոյնի նման կատէ, իր քաղաք, անշուշտ, հայ ջոջերէն:

Երբ վերեւ յիշուած նամակը կը կարգայինք անգլիագի երկտասարգի մը հետ, վերջաբանին կարծես քաղաքաւ, խնդր, որովհետեւ ամէնէ աւելի կը ճանչնայ ան Հօնտոնի եւ Մանչեսթրի շարք մը հայերու վաճառականական գիրքը եւ անւնց գրաձական կարողութիւնը:

—Անկարելի բան է, բաւ, ինձի դատնալ վ Այդ վաճառականներէն թմանք հազարաւոր սկի կը վաստակին տարեկան:

—Ճշմարտութիւնը ճշմարտութիւն

է. պատասխանեցի: Եթէ հարիւր հազարներ ալ վաստակին միւսնոյնն են, —Թէեւ ներողութիւն վրայ բերուչուարած, բայց պէտք է ըսել որ եթէ այդ է պարագան, ստոնք մարդկոչուելու արժանի համարի կը վարանիս ես:

Ժպտեցայ եւ պատասխանեցի որ մինչեւ այսօր համարելը արդէն մեծագոյն սխալ մըն էր:

Այս առջինը ըլլալով, զէթ այդ Աւագիւտային ըմբռնեց թէ հայ ջոջերու համարման ձեռնարկներէ հետո մեալը ոչ անախապաշարում է եւ ոչ ալ ուրիշ բան, այլ միայն իրենց բնածին ստոր անարգ, ցած ու պիտի հոգեբանութեան մէջ անբաժան մասը:

Փակելէ առաջ յօդուածս կուզեմ ուրիշ կէտ մը ուշադրութեան հրաւիրել:

Թէպէտեւ արկին Քօլ մտադիր է Ամերիկահայութեան ալ զիմում լինել որ անշուշտ կարելի է յիշուներն ալ որի միջոցներով, այսուհանդերձ պարտ կը համարիս ես իմ կողմէս յիշել այս սողիքով ես... յուսալով որ տակաւին չէ եղած այդ զիմումը, —Ի և անուք որ կուզեն օգտակարութիւն մը ընել և օտարներու սկսած ճիգերը արդիւնաւոր հանդիսացնել իողքս թող կամ նախկին մը տի կին Քօլէ խնդ եւ հանգանակութեան թերթը եւ տարակոյս չունիմ որ Ամերիկահայք, իւրովին ապրելով, կրնան մեծապէս նպաստել:

Անգամագրութեան գումարն է 4 շիլին (1 տոյար) եւ թերթը խոչոր ըլլալով կարելի է երբեմն հրապարակային ժողովներու մէջ ներկայացնել եւ զանազան անուններ գտնելով՝ կանոնաւոր գումարի մը հասցնել:

Այն առեւ, երբ օրին մէկը օտարին նորէն դիմում ըլլայ, կրկին աւելի զօրաւոր առիթ չունենան մեզ դառնալու եւ քսիլու:

«Ինչ որ ինչ կընէք ձեզի ու ձերին, ներուն համար... որ անտարակոյս այսպիսի զգուշի իրողութիւններէ վերջ կըլլայ բացարձակ ու յանցաւոր լուծութիւն:

Տիկին Քօլի, գանձապահ, հասցէն է.—տիկին Մատրոյին Քօլ, Տէյնհրոս, Բագրի:

Հօնտոն, Սոսիթ—Ուէսթ:

Իւրաքանչիւր նոյնիստու կոտանայ ի փոխաբան պոչտոնական ստաղագիրք եւ զրկողը վստահ կըլլայ որ իր օման պատշաճ տեղը հասած է:

Հօնտոն Մ. ՅՈՒԱԿ

Յ Ք.—Ուրիշ պիտի ըլլայինք եթէ Ամերիկահայութեան ձեռք տանելով այս խնդիրը, իր քաջայիտի լու համար օտարը եւ որոշ ատու թէ անգգայ ժողովուրդ մը չենք եւ գիտենք մեր կրօնաւոր ջրգանայ մերին ներուն համար առանց կուսակազական ու անհատական գոյնի չհազարգոյն իրենց ընթերցողները որ մեծ ազգեցութիւն կուենեայ օտարին վրայ:

Մ. Յ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԼՈՌԻՒԹԻՒՆ

Գրեթէ սակե ամիս մը առաջ պուլկարական թերթերէն միոյն մէջ կարգացինք թէ, ի Թրիւն, «Դրօշակի խմբագրութիւնը գողեր մտեր են, քանի մը հարիւր ֆրանք գողցիր եւ խառնեք են գաղտնի ու

կարեւոր Տօքիմաններ: Այդ լուրը նոյն թերթին մէջ երկրորդ անգամ հաստատուեցաւ քիչ մը աւելի մանրամասնութեամբ: Մենք կրօնպատկերք որ գրողական օւկանները այդ մասին տեղեկութիւն մը տան: Սակայն թէ «Դրօշակը եւ թէ միւս օւկանները, մանաւանդ «Դրօշակը» որ փխաւ-ձուկ ու տեղու լուրերը մեծ ախորժակով կը տպագրէ, իր ձեռքով վարդօյի մասին պուլկար թերթերուն տուած սուտերը նախանձի աճապարանքով կալուստպէ, իրօրոյն եւ խմբագրութեան մէջ տեղի ունեցած այդ խորհրդաւոր գողութեան մասին լուր մը չը հաղորդեց:

Ձար շեգուններ կան թէ՛ այդ գողութիւնը ընտանեկան է, մէկ քանի հարիւր ֆրանքը գիտամբ վերցուած է որպէս զի կարեւոր սօքիւմաններու աներեւութացումիս ալ արտաքին գողի մը յատկացուի: Արդեօք գողութեւն տօքիմանները հաշիւներու չի վերաբերի, մենք եւ անարպարանայի հաշիւներու, որոնց առիթը ընդհանուր ժողովը իրատ յանդիմանութիւններ պիտի տար նաեւ խիստ ոչոչութիւններ:

Այս լուծութիւնը շատ խորհրդաւոր է, եւ կրօնպատկերք որ գրողական օւկանները ապուստիկութեւն ունենան բացատրել հայութեան այդ խորհրդաւոր գողութեան իրական շափը և շացուցած լինալը:

Պաշտանեան շրջանական ժողովը գումարուած է, փառաւոր ճաշեր տեղի կուենան կոր, վանայի բաժանուած ընկերներու կողմէն ներկայացուցիչ մը կանչուած է բացատրութեանը համար: Կան թէ՛ մաքրազորութիւնը պիտի սկսուի Պաշտանեան շրջանին մէջ, բայց չենք հաստատար: Մաքրազորութիւնը վերելն սկսելու է որ արդիւնք մը ստացուի: Ասեց

Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Պ. վարդապետ մահափորձէն մէկ քուկու օր վեջը՝ տեսութեան էի գուցած: Անմահ Պետոյի հայրն ալ եկաւ տեսութեան եւ որովհետեւ հայերէն չի գիտէ, վարձու ալ թուրքերէն վարձ չէ, եւ երկու կողմի թարգմանը եղայ: Բաւական տեսակցելէ, իր ցաւակցութիւնները յայտնելէ վերջը Պետոյի հայրը՝ որքան որ հին մարդ, այնուամենայնիս յատ մեղձ կերպով բաւ.—աֆ Լաթր ին նէ գատեր քի հազըմ եօք օլլուտու: Պետրուսն իսմիմեէ թօփանան փարայ ի շիւն պիտ շէյ սէօլլմէք, ինչին քի պէն պէշ վարայ վէրմէ մի իմ եայրը սօրիեօրմ քի օնուն քիթապը շրգաճաճ մրօ, ես այս տանկերէնը պ. վարդոյի հայրին թարգմանեցի. պ. վարդոն ալ պատասխանեց.—սղըրամները 700 ֆրանք հանգանակուած է բայց մենք 800 ֆրանկէն աւելի քարձուցեր ենք եւ զայն տպագրելու համար բանկցութեան մէջ էինք վիճելու հարիւր հետ, չը համաձայնեցանք երկու հարիւր ֆրանքի պէտք ալ կըզգացուի: Վառնայի մէջ անպատճառ պէտք է տպագրուի, եթէ նուրիստուները քիչ մը եւս համբերութիւն ունենան սպասելու: Արգէն մենք քանի անգամներ շարժումի միջոցաւ յայտարարած ենք որ համարե-

րել շուրջըները կրնան ետ պահանջել իրենց գրամները. բայց մինչեւ ցարք ետ ուղող չեղաւ. հետեւաբար անպատճառ պէտք է տպագրուի: Այս խօսքերը Պետոյի հայրը լսելով շատ դո՛ւ եւ ուրախ եղաւ ու սիրտը լեցում ըստաւ — Օղումուն թիֆլիզ ահն կէլէն սօն մէքթուպու գալիպ էլ իմիշիմ, պիմէմ քիմ այմը: օնուն թուրքճէնի Անտօն Գօշ եազար, յա քին հայճար. եօգ. պուլաու- զըմտայ օտա եօլլարմ, պաս: Օ: նէ մէքթուպ իտի... ու սկսաւ հեծ- կլտալ, քիշ քը հանդարտելէ վերջ ես մեկնեցայ... մէկ օր վերջը ծեր մար- դը շուկան զըս տեսաւ ու ըսաւ սնուսու... եան իրճա իտէրիմ ան- նամայընը պէն վարդօ հանընայ կիթաիմ իտէ օղլումուն քիթապը վէ փարա իտէլմէք իշին կիթաիմ. Ու- յիւր, պէն օնը կէօրմէք իշին կիթ- տիմ, շունքիւ օղլումուն էն ազիզ տօսթու իտի պարուն վարդօ, օղլու- մուն պաշը պունար ետիլըր. Հէլօյիսա մէքթուպտէ պուլտու. վէրօիք հա- շըմտա իմիշ. ալըպ եօլլայաճայըմ օ Այս խօսքերէ վերջ բաժնուեցանք ի րարմէ:

Մի քանի օր անցնելէ վերջ պ. վարդօն իրեն տեսութեան պարզեցու- թուն սճարժումի մէջ շնորհակալու- թիւն յայտնած պարագային յիշած էր եւ Պետոյին հայրը. եղբայրը քոյրը, փեսան: Ազատու շէֆերուն զուր չե- կաւ ատ. եւ ամէն ստորնութեանց դի- մեցին անոնց այցելութեան ուրիշգոյն սալ, այսինքն իբր անոնք գացած են Պետոյի գրքի գրամները պահան- ջելու... զուր կեղծիքներ, Տիւրհա- յէկ եազարմի տօքթօրը. ճաշարանի մէջ սպանական ոճով կը խօսի Պե- տոյի փեսային Տիւր Ե. Չ. եւ կառ- նէ իւր պատասխանը սղուք չէք կա- թող ինձ եւ ընտանիքիս հրամայելո՛ւ հօրն ալ կը կտնչեն գազազ Պէնեա- նի խառնութիւն համոզելու համար, սակայն ան կը յայտնէ որ ես վկայ եղած եմ իր խօսակցութեանը... կը սահմակին, բայց նորէն լաներ մը կը մոլորան իրենց բալաս ճիւղմի- կին մէջ, Ալ այսքան կեղծիք, լրբութիւն, սիւսն սեւաքէքեան ծառաներուն յատուկ է. երբ իրենց թերթը կարգաբար այդպիսի ստու- թեան գէմգարանք գսպել անկու- բելի էր, քանի որ խօսակցութիւնը իմ ներկայութեան եղած էր:

Նոյն գիշերը Պետոյի հայրը մեր տունը հիւր էր... հարցուցի — հաշի աղա զուն գացի՞ր Ռազմիկի խմբա- րութեանը, որպէսզի քու անսակ- ցութիւնը վարդօյի հետ իրենց թեր- թի մէջ գրեն: Ես ճո՛ւն էի այս տեսող խօսքեր գուն ե՞րբ ըսիք վարդօյին որ գրիւր են: Ընտանի մարդը բարկացած պատասխանեց. սխալը, պէնիմ իա- պէրիմ եօգ քըր. պէն պիւր եկրե կիթմէտիմ. պէն շարժուաս կէլէր քէն շարժար Յակոբ Պէնեանըն թուեանընսա, սորալար—նիշի՛ն կէթտիմ. պէն սէօլէթիմ—օղլումուն ազիզ տօսթու տըր կիթտիմ: Սօր տուլար — նէ՛ զօնուչտունուգ. — սօստ կիպի: Փագաթ օնլար իսթէ տիլէր պաշգա իշէր գարըշտընլար Փագաթ պէն տօղլուսունու սէօլէ- տիմ, հէմտէ սօյլէտիմ քի սէլտէ օր- տա իտըն պէն նէ է օյլ է պիւր շէյ սէօլէտըմ, նէ տէ իա- պէրըմ վարտըր. օնլար քէն- տի թարափտան ույտուրըշար:

Այս խօսքերը Պետոյի հօր խօսքերն

են. կը տեսնա՞ք թէ յրբու թիւնը ինչ աստիճանի հասուցած են:

Այդի մեծ լրբութիւնը. վարդօն զեռ միլիպէ չեկած Պետոյի եղբայր Հայկը շափալանց լարուած էր շէֆե- թուն զէմէ ան էր անօջնեքը բոլոր քննադատական տեղեկութիւնները տուողը. ընկեր Օի սիջողաւ, ո- թոնք կը տպագրուէին սճարժումի մէջ. Երբ պ. վարդօն սճարժումի միջոցով յայտարարեց միլիպէ գալու մասին. մեր շէֆերը ամեն ճիգ թա փեցին պ. Հայկը շահելու համար, ինչպէս եւ մասամբ յաջողեցան. բայց մեր պարտը անանց քիշ մը լրջօրէն մասնելու. պ. կար. հետ պարուն վարդօյի ցաւակցութեան եր թալէ, գրքի մասին շատ քաղա քավարի ոճով խօսելէն յետոյ, երկու օր վերջ գործիք կրլայ եւ շէֆերու թեւադրութեամբ նամակ մը պտտրատելով առանց հօրը հասկը- ցնելու գրուած քին էր թիւնը. ստո- րագրել կուտայ, տաս օր պայմանա- ժամ տալով:

Պ. վարդօ իմ եւ ուրիշ պարուններու միջոցով հայրը կը կանչէ, փեսա- յին կը խնդրէ որ Հայկը առնեն գան. բայց չեն գար. փեսան թէ ուրիշներու եւ թէ վարդօյին կը յայտնէ որ ինք ատանկ ազատու գոր- ծերու չի խառնուիր. եւ չի ուզեր գործիք լլալ ազտուներու ձեռքը. աւելի լաւ է ոչ մէկ կարեւորութիւն տալ:

Վերջը հայրը վարդօյին կերթայ առանձին եւ կը իւր շատակը գիրքը հրապարակել քունի ինքը ողջ է. վերջապէս հօր ստորագրութեամբ այդ անմտ նամակը եւ Հայկի ստորագ- րութեամբ յաւելումը «Ռազմիկ» մէջ երեւան կուգայ. իբր թէ վարդօյի գրածները հերքելու համար. իրողու- թիւնը այն է որ եթէ Պետոյի մեծ քոյրը քաղաքէս բացակայ չըլլար վարդօն ճաշի ալ պիտի հրաւիրվէր: Ինչպէս զեռ անհափորձը չեղած հան- չիպած օրը խնդրած էր օր մը իրենց երթալ:

Այսպիսով ապակտեալ Ռազմիկ եանները շահ գործեցին ծերունու ստորագրութիւնը եւ գտան միամիտ Հայկը շահագործելու ձեռք:

Եթէ 859 սճարժումի մէջ պ. վար- ղօն Պետոյի հայրը չը մեղադրիր, մենք չը պիտի պարզէինք տոյտեղի շէֆերուն այս ստորնութիւնները. Երբ Հայկին ու հօրը ստորագրու- թեամբ գրութիւնները երեցան Ռազ միկի մէջ. նոյն իրիկունը Պետոյի հայրը 4 անձերու հետ կը գտնուէր տեղ մը. Ես ալ պատահմամբ հոն եր- թալով. բարեւելուս զիս քովերնին կանչեցին. ու ես ըսի ծերունուն.

— Հաճի աղա, այսօր հայր ու աը- ղայ բազմեր էիք Ռազմիկին մէջ. ինչ աղա որ գրած էիք վարդօյին գէմ, Ծօրը կգա կը բռնելով, սկսաւ երգուիլ: — Ուայր, պէնիմ հիշ պիւր շէյտէն խապէրիմ եօգ. պու նէ՛ էտկիսիլիք տիւր. ներկայ եղողներն էին Ս. Գար. ոսկերիչ Գրիգոր աղան, Եսմածի Կիլիգորը, Թէօյեան Մարտիրոսը:

Այս վերջիւնը որ Անտօն Կօշի հոգեղ քայն է... հաճի աղային խօսքերուն վրայ վեր վեր ցատկեցաւ. Բայց հաճի աղան զայմեալ կրկնեց վերը գրած- ներս: Այս է իրողութիւնը. մարդը հիշ տեղեկութիւն չունի. շէֆերը կեղ- ծեր են:

Այսպէս պ. վարդօ, ձեր մեղադ-

րանքը Պետոյի հօր մասին անտեղի է մարդը բնաւ տեղեկութիւն չունի:

Ան ձեր վրայ շատ լաւ համոզու- մունի. իբրեւ Պետոյի ընկերոջ եւ եղ- բորը վրայ նոյնպէս փեսաները եւ քոյրերը: Գուցէ այս գրութիւնս ալ յրբացած շէֆերու շէֆերուն դիպչի եւ այս անգամ, սպանակուն նամա- կէն վերջը, կեանքիս սպանան:

Վեշ—ՄԱՓԱՆ

Դեկ. 14. Ֆիլիպէ

Ի՞նչ է Ձարմանալի բան, Պետոյի հօր անունով ստոր տիպեր լնձ սե- ւացնում են մեր ժողովրդի առջեւ, այդ բաւ չէ, տալիս են բուլղար թեր- թերի. այնտեղից արտասպում իրենց օրգաններում, եւ այդ հօր կողմից ոչ մի հրապարակային բողոք այդ ստու թիւնների գէմ:

Ես էլ գիտեմ որ փեսաները եւ քոյրերը համակրանքով են վերաբը- վում. Հայկը նոյն իսկ թէ իրենց տանը թէ ինձ օտո քաղաքավարու- թեան եւ ընկերակախութեան սահ- մանից գուրս չի եկել. սիրահոջակ նամակը գրելուց յետոյ պատահել է Տրգօվսիկի ճաշարանում հաղորդել իր նշանգիրը... իր նօր կեանք սկսելը. կենացս խմել, բաժակը բաժակիս զարկել եւ այդ րոտրից յետոյ ոչ մի բողոք այդ ստու թիւնների եւ լրբու- թիւնների գէմ: Ոչ Պետոյի հայրը իր օրդու յիշատակի եւ ինձ գրպարովա. ծիս առջեւ արդարանալու համար պարտաւոր է թուրքերէն եւ իր ստո- րագրութեամբ հերքում գրել: Զոհո- ղութիւնները չափ ունեն:

ՎԱՐԴՈ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Միլիպէի սինլըքը շէֆերուն պ. վարդօյի գէմ սարքած անյաջող մտահափորձէն յետոյ խեղճերը կարծեցին թէ միլիպէի ժողո- վուրդը այդ ոճափորձէն սահ մոկած իրենց քսակները լայն պիտի բանան մեր ենիշէրինե- թուն առջեւ: Ատոր վրայ յոյսեր- նին գրած հանգանակութեան սկսան, չը մտածելով թէ մազա- ղաներէն խարաղանուելով գուրս պիտի քշուին:

Միլիպէի հայտնութեան ծանօթ եւ բաւակաւ ալ համակրելի մի անձնաւորութիւն իրեն ներկա- յացող շէֆերուն բսած է պա- թոններ. ի՞նչ կուզէք. յեղափո- խութեան համար դրա՞մ. օհ, ի՞նչ կատակեր գութիւն. իրաւ որ ըոն- լիք չըկայ, հա դրամ տանք որ յեղափոխութիւն ընէք. միլիպէի կամ արտասահմանի ազատ եր- կիրներու մէջ օ յիւն ալ երէկի ձեր պաշտելի ընկերներու եւ եզ բայրներու աբիւնը խմելով: Ինչք շէի՞ք որ ձեր ընկեր պ. վարդօն իբրեւ հեղինակաւոր գործիչ այս խառնութիւն մէջ ինձ ներկայացու- ցի՞ք եւ դրամ պահանջեցի՞ք. ու այսօր միլիպէի փողոցները անոր արւունովը կը ներկէք: Կա՞ն, կամ ունի՞ք վ. ա. ր. ց. օ. յի. ԶԱՏ. հՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒՆՅՅՈՂ ԸՆԴՈՒՆ:

ՆԱԿ ԳՈՐԾԻՉ ՄԸ...

Իա՛ւ է պարուններ, խպնեցէք քիշ մը. խնդրեմ անգամ մըն ալ չի գաք հոս, այլեւս ձեր խօսքե- րէն խաբուող չըկայ. ուրիշ գուռ գացէ՛ք:

Այսպէս մեր շէֆերը խայտա- ռակուած գուրս կեցին:

ԳԻՍԱԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԹՂԿՕ—ՍՊԵՆՅ, ԳԵԿ, 15/20 1906

Թուամանիոյ ղանազան քաղաք- ներէ հայ երիտասարդներ կը գիմեն շոս օժիտագրամով ազլիկ գտնալու եւ ամօնանալու նպա- տակաւ, այդ խեղճերը բաւա- կան ժամանակ թափառելով ու իրենց 1—200 ֆրանկները սպա- ռելէ վերջը ձեռնունայն ետ կը դառնան եւ միանգամայն այլոց ծաղրաբանութեան ենթակայ լինելով:

Աւստի ազգային պարտք հա- մարելով անձիս ի՛նչ խզճիս վրայ կ'ազդարարեմ թէ հոս պան- գուխտների եւ արհեստաւոր մար- գրիկների ազլիկ շին իտար բա- ցարձակ կ'արհամարհեն ո՞րքօ- ման կոկոման՝ ըսելով, տտոր բուն պատճառը ԾՍ տարիներ հոս եկեղեցու մէջը պաշտանավարող հայերէն չը դիտցող վարժապետ մը (որ է տարիներ առաջ մեռաւ) այդ անձի բւօրականներով ժո- ղովուրդը տիպուած է հայաս- եաց դառնալ եւ արգէն 25 տա- ըրներ առաջ գպրոցիս փակման բուն հեղինակը եղած է այդ վարժապետը—ինչպէս որ կը վկայէ նոյն թուականին հոս քա- հանայագործող եւ ականատես ե- ղող ընկի Սուշովացի ճ. Խաչա- տուր Ալիքսանեանի մէկ գրու- թիւնը, որը, Երզնկայիցի Մինաս սարկաւաքին նման սրաաշարժ կը գրէ գուշակելով միանգամայն Թուամանհայոց այդ տեղի փոքրիկ գաղութին կորուստը:

Ես ականատես եղայ այդ ազ- դին ազգափնաս արարքներին՝ սկանատես եղայ եւ Թուամանքի նախկին քահանայ Տ. Ղևոնդ Մի- քայէլեանի հայաուէր քաղա- քակալութեանը. գիտե՛մ, գի- տե՛մ թէ այդ վերջինը ամօնա- նանալու հայ ազգէն գոհացում չը ստանալուն համար նոր նիկոլ մը դարձաւ. իսկ այդ առաջինը, արգեօք կոյր սզգի մէջը կոյր ժողովուրդ մը գտած 50 տարի- ներ շարունակ ձրի ամասկաններ առնելու համար է, թո՛ղ ըն- թերցողը քննադատէ, Խօսքս ուղղելով նորէն հայ պանդուխտ- ներին կրքեմ, հոս գալ ազլիկ փնտռելը անմտութիւն է. գեռ անցեալները տեղոյս թաղականի մը բուն ստիպմամբ եւ հայ ազ-

քառ 21 տարեկան սպիկ Ժը 65 տարեկան ուսմէնի մրտուցու...

Աստի կը յորդորեմ հայ երիտասարդները թո՛ղ Պոլկարիա երթան հոն իրենց ճաշակին համեմատ հայրենիներ կրնան...

ձյարտախոս

Անգլիական «Թրիբուն» թերթի Մակեդոնիոյ մասին

Վերոյիշեալ թերթին Սելանիկի թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ. Եւրոպական թուրքիոյ քաղաքները այցելող ճամբորդը երբ վեր ի վերոյ ակնարկ Ժը կը նետէ մարդկանց գործերու վրայ...

Ձինուորական հրամանատարի մը գործունէութիւնը Բոսթոնի շրջանի մէջ կրնայ ընդունել օրինակ լլուլ. Ան գիւղացիներուն արգիլած է արեւը մտնելէն կես մամ վերջը գիւղ վերադառնալ...

Կանչէ դպրոցի հոգաբարձուներէն մին և կը պահանջէ որ վարձուհիներէն մին իրեն կին բերէ. Սոյս կը բարձրացնելով և հայրենաբնորով կսէ խեղճին. — Եթէ դու չու գա՞վոր սպիկը չը բերես մինչեւ այսինչ օրը, գրիստ վերեւը տլլեալ ալ եւ չը կայո:

Կայր հ. ւն ալ երբեմն կը կտցէ ցորենի հատիկ, աղպէս երբեմն թուրք ոստիկանութիւնը բաժնի մը կը գտնայ:

Նարաթ մէ առաջ հաղորդեցի ձեզի թէ՛ պոլկարական քոմիթէն այս ամառ կառուցու համար մեծ պատրաստութիւններ կը տեսնայ. թուրք զորախումբ մը այս օրերս կերթալ պոլկարական գիւղ մը, Սէրիսէ գաւառին մէջ. ու սովորականին համաձայն կսկսի տուններ խուզարկել զէնքեր գտնելու նպատակով. Պատահամբ գիւղին մէջ պահուած ըլլալ սպաստմբական հրոսարտաճր մը կօրկիլ Սթոյանօփի հրամանատարութեամբ Վերջինս կը ձերբակալուի և հարցաքննութեան միջոցին կը խոստովանուի կոմիտէտի պատմութեան մէջ այս առաջին գէպքն է. որովհետեւ այգպիսի պարագաներու մէջ հրոսակետը միշտ իրեն համար գնտակ մը ունի պահած. Ասոր արդիւնքը այն եղաւ որ զը տան 50 քիլօ տին. մրտ 70 մեծ և 100էն աւելի փոքրիկ ոտմբեր, 80 հրացան, մի քանի էլէքարիկ լամբաներ և հլգեհ մարելու 3 մեքենաներ.

Դանուբէ նաեւ կօմիթէթի անդամներուն ցանկը. Չերբակալութիւնները արդէն սկսուած են. մեղաւոր և թէ անմեղ պուլկար պէտք է որ գաղանային հալածանքներու ենթակուին:

ՆԵՐՔԻ ԼՈՒՐԵՐ

Թրնօփայի մէջ այրուեր է նա հսնգային վարչութեան շինութիւնը. Այդ շինութիւնը մնացած էր թուրքերէն և հոն տեղի ունեցած էր Պոլկարիոյ առաջին ազգային ժողովը. Նոյն այդ շինութեան մէջ կը գտնուէր 1886 թւին հեռագրութիւնը. ուրկէ Ստամբուլովը իր ընկերներովը միասին կատարեց հակառուսական յիպոշրջումը:

— Արդարադատութեան նախարարին հրամարեցումը անխուսփելի կը կարծուի. անոր զէմ եղած մեկացումներուն պատճառով:

— Սօլիդի համախարանին ուսուցչապետական ժողովը հակառակ է նոր օրէնքի, որուն համաձայն բոլոր միջնակարգ դպրոցը աւարտողները կրնան համախարան մտնել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Անցեալ օրեր հաղորդած էինք որ Սէրիսի քովի յիսուսականներուն պատկանող գէնքեր և այլն գանդեր են. կառավարութիւնը այդ յաջողութիւնը ունեցեր է շնորհիւ ձերբակալուած հրոսակետ գործիւն Սթոյանօփի. որ ինքզինքը պատկուհի հարամեն գաղտնիք յայտնած է կառավարութեան և պարզեւնդունած 500 ոսկի:

— Սպանութեան փորձ մը հլպատասի գէմ. — Թրանսիական հրապատաս պ. Իրգանը. Սուսուլում, երբ Գիարբեկիւրից գրնում էր իր պաշտօն տեղին Տ/գրիս գետով, մի քանի վրայ, «Համիդիէ» քիւրդերը յարձակում գործեցին. որին պատասխանեց հրապատասը զէնքով. Երկու կողմից արձակուեցին մօտաւորապէս 100 հրազէն. հրապատասը կարողացաւ անգլիացի շարունակել իր ճանապարհը:

— Պ. Էրիէնի այցելութեան նպատակը. — Դենք հաղորդել էինք, որ Թրանսիայի պատերազմական նախկին մինիստր Էտիէնը՝ իր համեստափայլ ընտանիքի հետ այցելել էր Պոլիս, ընդունուել նոյնիսկ նորին կարմիր վահափառութիւնից և արժանացել բաժնակալ Համիդի ականակուս պատուանշաններին. որոնք շատ լուսն սպիւն մի հանրապատութեան բարձրաստիճան պաշտօնեայի զեմօկրատիկ կրծքին. Արգ. եւրոպական թերթերն այժմ մեղատու են, թէ ուր է թաղուած շահ գլուխը Պ. Էտիէնը գնացել էր Պոլիս, ձեռք բերելու համար Էրէլլիի ամսահանքի շահագործման արտօնութիւնը:

Ռ Ո Ւ Ո Ւ Ա

Լեհական ընտրողական քոմիթէն Բեթեւայուրկէն արտօնութիւն ստացեր է լեհերէն լեզուն գործածել ընտրողական ժողովներուն մէջ:

— 17 գեկ. գիշերը յարձակեր են հնազանդ ոտս վանքի մը վրայ, վանքը թալաներ են. բոլոր թալանը տարած միջոցուն. գիւղացիները վրայ են հասեր ու թալանդներէն քանի մը հոգի սպաննելով վանքին իրերը ետ խցեր են:

— Կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք կառնու որ ընտրութիւնները ի նպատ իր կուսակիցներուն կատարուի:

Նախարարապետ Սթոյիբին բոլորովին միացած է սղգային խորիցաններուն:

Սթոյիսքի մէնէրալ նահան:

գապեր սպաննուած է.

ՊԱՐԱԿԱՆՍԱՆ

Եւհին սոցիալական վիճակը բարոյութեան է. թուրքութեան որոշ շրջանէ մը վերջը:

— Կահաժառանգը, որուն այժմ յարձնուած է երկրին կառավարութիւնը քանի մը փոփոխութիւններ կը մտցնէ ոահմանագրութեան մէջ. այդ փոփոխութիւնները կը վերաբերին հասարակութեան, երեսփոխանական ժողովի հրաւիրման ձևին և ձեռակոյտի իրաւ ստիճանից:

ՄՐԱՅ «ՐՐՕՇԷՔ»

Աւստրիայի հայ երիտասարդներէն կազմուած ՊԼՐԱՔՊԱ նուագախումբը, մասնակցութեամբ Դանուբան Տրգ. զօրաբանակի Բարլի մայիսի պ. Տրանց Եթրոյսի շքեղ նուագահանգէս մը պիտի տայ, 1906 յեկ 25ին. էրկուշաբթի գիշեր, ժամը 9ին. յուսանք թէ վառանքի հայ հասարակութիւնը պիտի ջանայ առիթէն օգտուլ միմիայն հայրէ կազմուած լուրջ երաժշտական խումբը իր ներկայութեամբ քաջալերել իր այդ գեղեցիկ գործին մէջ:

ՅԱՅՏԱՐՍՐՈՒԹԻՒՆ

Բացուած է բոժանորդագրութիւն

Ա. Դիւմայի

«ԲԱՍՏԻԼԻ ԱՌՈՒՄԸ»

Հոչակաւոր պատմական գործին՝ Թրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակից:

Թարգմանութիւն

Մ. Պաղտասարեանի

Գիւղը 300 էջերից բազկացած 6 եւ 5 կէս ծաւալով եւ ընտիր թղթի վրայ տպագրուած. մատուցի տակն է եւ լոյս կը տեսնի շուտով:

Պարկաստանի համար՝ կազմածը 10 դրան. թղթակազմ 8 գր. Թուսաստան թղթակազմ 1 ո. 50 կ. Եւրոպա " 4 ֆրանկ. Ասերիկա " 1 դօլար Գրավածառներին 20 առ հարիւր զեղջ կը տրուի փոստի ծախս մեզ է պատկանում:

Պատէրները ուղարկել կանխիկ գրամով Հրատարակիչ Մ. Պաղտասարեանին

Թարգից (Պարկաստան)

Печатница „Взаимность“ Варна